

Եր, որ իր համոզմունքին համար կը դատապարտուէր: Հետագային, Նոյն մեղադրանքով պիտի դատապարտուէին՝ փիլիսոփաներ Սոկրատէս եւ Արիստոտէլ:

Անաքսագորասի փիլիսոփայութեան առանցքը կը կազմէ գոյացութիւնը (Substance, յուն.՝ ousía), որ բազում նիւթերու խառնուրդն է: Ասոր կողքին ան գրած է ոգին (յուն.՝ nous) մասին, որպէս միակը, անսահմանը, զուտը, անխառնը, ամենաուժեղը ու ամէն ինչ կարգաւորողը:

6. Հիլէականներ

Հիլէականներու (Atomists, Ատոմականներ) ուղղութեան հետեւորդներուն համաձայն, նախանիւթը *հիլէն* է կամ *ատոմը* (յուն.՝ átomos = անբաժան), սկզբնական նիւթի ամենափոքր, անբաժան, ինչպէս նաեւ որոշ ձեւ, կշիռք ու խտութիւն ունեցող միաւորը, որ անդադար կը շարժի՝ անվերջ պարապութեան մէջ: Անոնք կը բացատրեն թէ շարժուն հիլէներու (ատոմներու) միացումով կը յառաջանան ու բաժանումով կը կործանին մարմինները եւ կը պնդեն, որ այս ձեւով յառաջացած է նաեւ աշխարհը՝ անհրաժեշտաբար: Այս ձեւով փիլիսոփայութեան մէջ մուտք կը գործէին Նոր եզրեր.- հիլէն (յուն.՝ hylê) կամ ատոմը (յուն.՝ átomos) եւ պարապութիւնը (յուն.՝ kenós) կամ ոչնչութիւնը (յուն.՝ óúden):

Հին Յունաստանի Աբդերա (Abdera) քաղաքին մէջ, մ.թ.ա. 5-րդ դարուն, հիլէական (ատոմական) դպրոցի հիմնադիրը եղած է *Լեւկիպոսը*, որուն կը հետեւի եւ ուսմունքը անելի կը զարգացնէ իր աշակերտ *Դիմոկրիտոսը*: Հետագային եւ մինչեւ մեր օրերը, ատոմիզմը (Atomism) կ'ունենայ նաեւ իր հետեւորդները:

Այստեղ, Լեւկիպոսէն եւ Դիմոկրիտոսէն ետք, առանց մանրամասնութեան պիտի յիշուին անունները՝ Հելլենիստական շրջանէն *Էպիկուրոսի*, որ մեծապէս ազդուած է Դիմոկրիտոսէն եւ *Լուկրեցիոսի*, որ իր կարգին կը կրէ Էպիկուրոսի ազդեցութիւնը:

• Լեւկիպոս (Leucippus, յուն.՝ Leúkippos, 500 – 440 մ.թ.ա.)

Ծնած է Յոնիա շրջանի Միլետոս, Աբդերա կամ Էլեա քաղաքը եւ շատ հաւանաբար աշակերտած է՝ փիլիսոփայ Պարմենիդէս Էլեացիին: Ան եղած է հիմնադիրը՝ հիլէական (ատոմական) ուսմունքին, որ անելի պիտի զարգանար իր աշակերտ Դիմոկրիտոսի օրով: Լեւկիպոսի գրած է՝ «Մեծ Աշխարհստեղծումը» (յուն.՝ Mégas Diákosmos) եւ «Մտքի մասին» (յուն.՝ perì nous) երկերը:

Լեւկիպոսի կը վերագրուի նաեւ «պատճառականութեան օրէնքի» (Causality) հետեւեալ խօսքը.- «*Առանց պատճառի ոչ մէկ բան կը յառաջանայ կամ կը պատահի, այլ ամէն բան, անհրաժեշտաբար, կը հետեւի հիմնաւոր պատճառի մը*»: